ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Շվեյցարիա / Ժնև / 25 - 29.10.2022թ.

- **Նպատակը**

Միգրացիայի վիճակագրության փորձագիտական խմբի հանդիպում՝ կազմակերպված ՄԱԿ Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից:

Փորձագիտական խմբի հանդիպումն իրականացվել է Եվրոպայի վիճակագիրների համաժողովի միջազգային միգրացիայի աշխատանքների ծրագրի շրջանակում՝ հանդես գալով որպես միջազգային միգրացիայի տվյալների հավաքման, արտադրության և տարածման վերաբերյալ նոր գիտելիքի ձեռք բերման, լավագույն փորձի փոխանակման մասնագիտական հարթակ:

- **Քննարկված թեմաները**

Փորձագիտական խմբի հանդիպման ծրագրերի շրջանակում քննարկված թեմաներն են.

1. Միգրացիայի վիճակագրական գնահատումը՝ հիմնված վարչական աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա, դրանց օգտագործման բարելավումը.
2. Միգրացիայի վիճակագրական գնահատումը՝ տվյալների նոր աղբյուրների օգտագործմամբ.
3. Հետհամաճարակային միգրացիոն հոսքերը.
4. Փախստականների մեծ հոսքերի գնահատումը.
5. Չփաստաթղթավորված միգրացիայի (անկանոն միգրացիա) գնահատումը.
6. Միգրացիայի վերաբերյալ 2020թ. մարդահամարների շրջափուլից ստացված արդյունքները.
7. Էմիգրացիայի (արտագաղթի) վիճակագրական գնահատումը.
8. Դրամական փոխանցումների (տրանսֆերտների) վիճակագրական գնահատումը

Վերջին տարիներին միգրացիայի վիճակագրություն ստեղծելու նպատակով լայն տարածում է գտնում վարչական տվյալների օգտագործումը՝ հաղթահարելու համար միջազգային միգրացիայի վիճակագրության տեղեկատվության ավանդական այլ աղբյուրների օգտագործման հետ կապված սահմանափակումներն ու դժվարությունները, օրինակ՝ մեծ ծախսատարությունը, տնային տնտեսությունների կողմից հարցումներին մասնակցության նվազումը և այլն: Թեմայի շրջանակում վարչական աղբյուրների օգտագործման իրենց փորձը ներկայացրեցին մասնակից երկրների ներկայացուցիչները՝ հատկապես նորարարությունների լույսի ներքո:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց Միգրացիայի վիճակագրության նորարարությունների առցանց տվյալների բազան (DIMiS) և դրա վերլուծության հիման վրա պատրաստված Զեկույցը՝

առաջարկությունների, լրացումների, դիտողությունների, ինչպես և տվյալների բազայի կիրառությունը խթանելու և զարգացնելու նպատակով:

Հանդիպման մասնակիցները ներկայացրեցին վերջին երկու տարիների ընթացքում Covid-19 համավարակի ազդեցությունը հանրային առողջության, սոցիալական և տնտեսական կյանքի, միգրացիոն հոսքերը վրա՝ դրանք դարձնելով ավելի դժվար չափելի: Քննարկվեցին նաև՝ արդյո՞ք միջազգային միգրացիան կվերադառնա նույն «նախակովիդյան» մակարդակին և միտումներին, արդյո՞ք միգրացիոն հոսքերի կոնկրետ տեսակներ կդառնան ավելի կարևոր, քան դրանք կային մինչ 2020 թվականը, ներկայացվեցին միգրացիոն հոսքերի վրա Covid-19 համավարակի կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունների վերաբերյալ դիտարկումներ:

Ներկայացվեց միջազգային կազմակերպությունների կողմից Ուկրաինայի ռազմական հակամարտության հետևանքով աննախադեպ մեծության փախստականների հոսքերի վերաբերյալ հասանելի տեղեկատվությունը: Քննարկվեցին հարցեր՝ կապված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փախստականների վերաբերյալ տվյալների ստացման, հավաքագրման ընդլայնման հնարավոր ուղիների հետ, արդյոք հավաքագրվում է տեղեկատվություն այն մասին, թե որտե՞ղ են ապրում փախստականները, ինչպիսի՞ն են նրանց սոցիալական և տնտեսական պայմանները:

Քննարկման առարկա էր չփաստաթղթավորված միգրացիան գնահատելու և մարտահրավերները հաղթահարելուն ուղղված երկրների փորձը: Բազմաթիվ երկրներում փաստաթղթեր չունեցող միգրանտների վերաբերյալ տվյալների հավաքագրումը շարունակում է մնալ կարևոր մարտահրավեր: Բնակչության այս խումբը հաճախ է հանրային բանավեճերի առարկա, իսկ տվյալների ավանդական աղբյուրների միջոցով դժվար է ճշգրիտ գնահատել դրանց մասշտաբները և միգրանտների անհատական բնութագրերը, կա՛մ այն պատճառով, որ դրանք դուրս են տվյալների հավաքագրման ավանդական մեթոդներից՝ նրանց վերաբերյալ տվյալների սակավության կամ պաշտոնական գրանցումների բացակայության պատճառով:

Բազմաթիվ երկրներում հերթական մարդահամարի իրականացման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են, որոշ դեպքերում դրանք խափանվել կամ հետաձգվել են Covid-19 համավարակի հետևանքով, ինչի արդյունքում կան երկրներ, որոնց միգրացիայի վերաբերյալ տվյալները հասանելի են դեռևս նախորդ մարդահամարի արդյունքներով: Ըստ այդմ, թեմայի շրջանակում երկրները ներկայացրեցին մարդահամարի անցկացման կամ հետաձգման հետ կապված արձանագրված զարգացումները, առկա խնդիրները, մարտահրավերները, ինչպես նաև առաջիկա պլանները՝ անդրադառնալով նաև Covid-19 համավարակի ազդեցության հետ կապված գործողություններին:

Քննարկվեց նաև վարչական աղբյուրների և տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների տվյալների ինտեգրման եղանակով կամ այլ աղբյուրներ կիրառմամբ՝ նպատակակետ երկրների տվյալներով, էմիգրացիայի գնահատման մասնակից երկրների փորձը:

Covid-19 համավարակի հետևանքով որոշակիորեն փոփոխվել են դրամական փոխանցումների վիճակագրություն կազմելու նպատակով օգտագործվող տվյալների աղբյուրները և հավաքագրման մեթոդները: Օրինակ, տնային տնտեսությունների հետազոտությունները փոխարինվել են վարչական տվյալների օգտագործմամբ կամ տվյալների հավաքման թղթային տարբերակը փոխարինվել է էլեկտրոնայինով: Օգտակար էր դրամական փոխանցումների

ծավալների և հոսքերի վերաբերյալ վիճակագրության ներկայացումը, որն ակնառու դարձրեց համավարակի հետևանքով միգրացիայի կրճատման ազդեցությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում կիրառվող Միգրացիայի և տրանսֆերտների վերաբերյալ ներդաշնակեցված մոդուլի վերանայման անհրաժեշտության հարցը՝ հաշվի առնելով 2021 թվականին Covid-19 համավարակով պայմանավորված նոր իրողությունները:

Ներկայացվ սոցիալական մեդիայի տվյալների օգտագործմամբ, միգրացիայի գնահատման այլընտրանքային գնահատումների տարբեր երկրների փորձը: Քննարկվեց այդ տվյալների արժանահավատության, թույլ և ուժեղ կողմերի վեր հանմանն առնչվող բազմաթիվ հարցեր:

**Արդյունքները**

Փորձագիտական խմբի հանդիպումը հնարավորություն ընձեռեց մասնակից երկրներին տարածել և փոխանակել միջազգային միգրացիայի վիճակագրության ոլորտում տվյալների հավաքագրման, մշակման, տվյալների օգտագործման և տարածման մեթոդների իրենց փորձը՝ գնահատման գործընթացում կիրառելու համանման չափորոշիչներ, ինչն իր հերթին կնպաստի ոլորտի առավել արդյունավետ քաղաքականության մշակմանը և տվյալների միջազգային համադրելիության մակարդակի բարձրացմանը:

Փորձագիտական խմբի հանդիպումն արժեքավոր էր միջազգային միգրացիայի վիճակագրությանն առնչվող թեմաների բազմազանությամբ, արդիականությամբ ու կարևորությամբ, նոր մարտահրավերների, երևույթի չափման նորարարական մեթոդների և աղբյուրների, վերջին զարգացումների մասին իրազեկվելու առումով՝ հաշվի առնելով ողջ աշխարհում միջազգային միգրացիայի վիճակագրության արագ աճող պահանջարկը և հետաքրքրությունը:

- **Նշումներ**

Փորձագիտական խմբի հանդիպման հիմնական թիրախային լսարանն ազգային վիճակագրական գրասենյակներից և միջազգային կազմակերպություններից միջազգային միգրացիայի վիճակագրության գծով պատասխանատու վիճակագիրներն ու վերլուծաբաններն էին:

Աշխատաժողովին մասնակցում էին ԱՊՀ տարածաշրջանի վիճակագրական գրասենյակների մասնագետները, ԱՊՀ վիճպետկոմի, ԵԱՏՀ, ՄԱԿ-ի վիճակագրական դեպարտամենտի ներկայացուցիչները:

Այցելության ծախսերը հոգացել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովը:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան